


և անաչառ՝ ուղարկել Սինոդ իր եղբակացութեամբ։

— Ապրիլի 28. Ուղարկելով Ս. Աթոռի վանական կառավարութեան Օշական գիւղի այն բնակիչների ցուցակը, որոնք ինքնագլուխ այգիներ են անկել, պատուիրել, ստուգել և յայտնել Սինոդին թէ ե՞րբ են անկել, ո՞ր կողմ, ի՞նչ պիտի տեղերի վրայ և իւրաքանչիւրը ո՞րքան տարածութեամբ, յետ պահանջելու դատաստանական կարգով։ Գրել նաև վաղարշապատի պ. գաւառապետին կարգադրել արգելելու ինքնագլուխ այգիների անկելը։



Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՑԱԻՐ.

«Զիւրդ դժուարին է՝ որ զինչսդ ունին,
մտանել յարքայութիւն Աստուծոյ»

Մարկոս Ժ. 23.

ԸԱՏԵՐԸ կյիշեն երևի, թէ ինչ առթիւ է ասել Քրիստոս այս խօսքերը։— Մի հարուստ երիտասարդ եկաւ նրա մօտ, առաջը չոքեց ու հարցրեց, թէ ի՞նչ անէ, որ յաւիտենական կեանքի տիրանայ։ Այդ մարդու բոլոր շարժումաճըն ու խօսքերը ցոյց են տալիս, որ նրա ցանկութիւնն անկեղծ էր, նպատակը մաքուր, երբ Քրիստոս յիշեցնում է նրան Աստուծոյ պատուիրանները, որ ամէն հրէայ մանկութիւնից սովորած պէտք է լինէր, և հասկացնում կարծես, թէ մի գուցէ նրա միտքն է խոյս տալ սոցանից և աւելի հեշտ ճանապարհ գտնել յա-

ւիտենական կեանքի համար՝ նա լրջութեամբ պատասխա-
 նում է, որ դոցա յարգը գիտէ և բոլորը կատարել է.
 այժմ ուզում է իմանալ՝ ուրիշ ի՞նչ պակաս բան կայ, որ
 այն էլ կատարէ։ Նա երիտասարդ էր—այն երջանիկ հա-
 սակի մէջ, երբ հասարակաց մոլար կարծիքով ամէն ազա-
 տութիւն ներելի է՝ ներելի են ամէն տեսակ զուարճու-
 թիւններն ու վայելքները, և հարուստ լինելով՝ նա կարող
 էր շատ վայելքներ ձեռք բերել, կարող էր այնպէս թա-
 ղուել շրջապատող կեանքի ընծայած զուարճութիւնների
 մէջ, որ ամենեւին միջոց էլ չունենար մտածելու, թէ մի
 ուրիշ կեանք կայ, բայց այդպէս չէր վարուել, աշխատել
 էր ամէն կերպ Աստուծուն հաճոյ լինել և իւր բարոյական
 պարտականութիւնները կատարելով՝ աւելի տեսական և
 ապահով հարստութիւն դիզել։ Այդ բաւական չէ, նա փո-
 խանակ իւր ազգակիցներից շատերի նման մեծամտելու և
 ինքն իրեն խաբելու, թէ, իբրեւ խիստ պատուիրանապահ,
 արդար է արդէն Աստուծոյ առաջ և երկնային առատ
 վարձուց արժանի՝ զգում է, որ մի պակաս Բան կայ իւր
 մէջ, և այդ պակասը լցուցանելու համար Նորան է դի-
 մում, որից ուրիշները խոյս էին տալիս. կնշանակէ այն-
 քան մաքուր սիրտ ունէր դեռ, որ չնաշխարհիկ Վարդա-
 պետի խօսքն ու գործը զօրեղ տպաւորութիւն էին գոր-
 ծել վերան և մի ներքին ձայն նրան ասում էր, թէ
 այստեղ կարող էր գտնել իւր որոնած կատարելութիւնը։
 Հասկանալի է ապա աւետարանչի նկատողութիւնը, թէ
 Յիսուս տեսնելով այս երիտասարդի ազնիւ ձգտումը դէ-
 պի բարին՝ համակրեց նրան։ Ըստ երեւութին ոչինչ չէր
 արգելում այլ ևս նրան ճշմարիտ արդարութեան ճանա-
 պարհի վերայ ոտք դնելու, և հարկաւոր էր միայն, որ
 մէկը ցոյց տար այդ ճանապարհը. սակայն Յիսուս բերա-
 նը բաց արաւ թէ չէ, պարզուեց իսկոյն, որ արգելք կար,
 և անխորտակելի մի արգելք։

Գնահ, ունեցածդ ծախիր, աղքատներին տուր, ու եկ
 իմ ետեւից։—Իրօք ինչո՞ւ ծանր պէտք է թուէր այդ պա-
 հանջը մի մարդու, որ իւր անձին չէր խնայել, իւր երի-

տասարդական բորբոք ցանկութիւնները սանձել էր կարողացել և իւր ամէն քայլափոխը յօժար հաստատակամութեամբ օրէնքի խիստ պահանջներին ենթարկել, նա ընդունում է, որ իւր այժմեան կեանքը ոչինչ է յաւիտենականի համեմատութեամբ՝ հետամուտ է ըստի հոգւով դրան հասնելու, և ահա, երբ ամենահասարակ միջոցն են առաջարկում ոչինչը յաւիտենականի հետ փոխելու՝ նա վրդովուում է, դէմքը խոժոռում և շտապում հեռանալ—չլինի յանկարծ իւր ստացուածքը խլեն ձեռքից։ Եւ դեռ աւելի զարմանալին կայ։ Այդ երիտասարդը մեծացել էր հարստութեան ու փարթամութեան մէջ, փարժուել փափուկ կեանքի, շարունակ փայփայել այն միտքը, որ դրամը ոյժ է, միջոց է տալիս իրեն լայն տեղ բռնելու աշխարհում և սրտի ուղածն անելու համար, ասենք, դժուար էր մի ակնթարթում հրաժարուել այդ բոլորից և նահատակութեան խաչը ուսն առնել։ Ի՞նչ կերպ էին արդեօք մտածում Քրիստոսի աշակերտները, որոնք առհասարակ աղքատ ընտանիքների զաւակներ էին, չարքաշութեան սովոր. որոնք մի քանի տող ներքեւ պարծենում են, թէ ամէն բան թողել ու նրա ետեւից են գնացել—երբ նա երիտասարդի հեռանալուց յետոյ դառնում նոցա ասում է. Ի՞նչպէս դժուար է ունեւորի համար Աստուծոյ արքայութիւն մտնելը, և յետոյ կրկին աւելացնում է. Աւելի հեշտութեամբ ուղտը ասեղի ծակից կանցնի, քան մեծատունը Աստուծոյ արքայութիւն կ'մտնի,—նոքա, այդ խօսքերի ճշմարտութիւնն իրենց աչքի առաջ ակներեւ կերպով ապացուցուած տեսնելով հանդերձ՝ ո՛չ թէ երկիւղածութեամբ ընդունում, իրենց սրտի մէջ տեղ են տալիս և սոսկում այն խաւարային ուժից, որ այդպիսի անիրաւ բռնութիւն է գործ դնում մարդոց վերայ, այլ շփոթում են, կարծես աշխատում են արդարացնել երիտասարդի վարմունքը, և իւրաքանչիւրն ի նկատի առնելով, թէ որչափ գին ունի իւր աչքում ամենափոքր սեփականութիւնը՝ մի սև դրոշն անգամ, հարցնում է զարմացած. Ի՞նչ կլինի ուրեմն մարդկութեան վիճակը. ո՞վ կարող է

այլ ևս ազատուել, Աստուծոյ արքայութեան, յաւիտենական կեանքի յոյս ունենալ, մինչև ամէնքը սերտ սիրով կապուած են իրենց ստացուածքի հետ:

Եւ Փրկիչը մասամբ իրաւունք է տալիս նրանց ուրնական դանում նոցա զարմանքը: Յիրաւի այնչափ զօրեղ է գծուծ նիւթականի իշխանութիւնը մարդոց վերայ, այնպէս սովոր են նոքա իրենց երջանկութիւնը գոյրի մեծութիւնից կախուած համարելու և իրենց կեանքի արժէքը ունեցուածքի մէջ տեսնելու, որ քանի իբրև մարդ՝ իբրև մի հոգեղէն արարած են մտածում, իրենց կենդանութեան շունչը անմիջական շրջապատի նեղ և հեղձուկ մթնոլորտից առնում, այլ կերպ դատել իսկ անկարող պէտք է լինեն: Սակայն կայ Մէկը, որի մօտ ոչինչ անհնարին չէ, և երբ նա մարդոց վերայ պարզում է Իւր հովանաւորող աջը՝ նոցա համար անհնարինն ևս հնարաւոր է դառնում. բաւական է, որ նոքա զգանայդ հովանին, բարձրացնեն աչքը դէպի վեր և երկնային, պայծառ, անհուն տարածութիւնը դիտեն, այնտեղից շունչ ստանան և յաւիտենական սուրբ կեանքի ճաշակն առնեն՝ այն ժամանակ այլ ևս դժուար չի լինի թողնել ամէն ինչ և նորա ետեւից գնալ, որ դէպի այդ կեանքն է առաջնորդում: Մեծատուն երիտասարդն անշուշտ բոլորովին զուրկ չէր այդ զգացումից. Փրկչի մօտ եկած միջոցին նրա սրտի մի անկիւնում թաքնուած էր այն և գուցէ կրօնկէր Աստուածային վարդապետի հրեղէն շրթութունքներից ցոլած խօսքերի աղբեցութեան ներքոյ, նրա ամբողջ էութիւնը կհրդեհէր և ճշմարտութեան աւետարանի խաչակիրներից մէկը կդարձնէր նրան, եթէ անչափ մեծ չլինէր նրա մէջ նիւթականի սէրը, անչափ ծանր հարստութիւնից բաժանուելը նրա համար: Իսկ առաքեալները, թէպէտ դեռ չէին կտրուել աշխարհից և մի աչքով միշտ յետ էին նայում, բայց մի աչքով կեանքի Առաջնորդի աւակական ներկայութիւնը նպաստում էր, միւս կողմից իրենց աղքատիկ կացութեան պակաս հրապուրիչ լինելը թոյլ տալիս, որ երկնաւորի զգացումը զօրանար հետզհետ:

տէ նոցա մէջ՝ մինչև կգար օրը, երբ աշխարհիս ամբողջ հարստութիւնը իբրև կղկղանք պէտք է երևար նոցա աշ-
քին և նոքա պատրաստ պէտք է գտնուէին ոչ միայն ու-
նեցուածքը, այլ իրենց կեանքն անդամ դնելու և զնալու
երկնաւոր Վարդապետի ետեից։

Այսօր հարիւր միլիոններով են հաշուում նոցա թիւը, որոնք աւազանի մկրտութեամբ ուխտ են արել աշխարհի բարիքներից ձեռք քաշել և Քրիստոսի հետեւել։ Սակայն այդ միլիոնների շարքերում քանի՞ տասնեակն արդեօք ընդունակ է իւր ուխտը լրութեամբ իրագործելու կեանքի մէջ։ Քանի՞սը գտնէ նոցանից, որ այդպիսի ուխտ կատարեալ գիտակցութեամբ կրկնել են Աստուծոյ սեղանի առաջ՝ իբրև Եկեղեցւոյ պաշտօնեաներ, իբրև նուիրեալներ ու կրօնաւորներ։ Յարաբերութիւնը սոցա մեծամասնութեան համար գրեթէ նոյնն է, ինչ որ այն մեծատուն երիտա-սարգի և գաղափարով դեռ ևս նրանից շատ հեռու չգլու-նուող առաքեալների համար։ Մէկը այնչափ ժամանակ պատուիրանապահ է, առաքինի, գաղափարական ձգտում-ների տէր, քանի նորանից մեծ զոհեր չեն պահանջուում, թոյլ են տալիս հաճելի կերպով կարգաւորել իւր նիստու-կացը և առատութեամբ վայելել աշխարհի բարիքներից։ միւսն ըստ երևութին զոհ բերում է, Քրիստոսի ջերմե-ռանդ հեռեւող հանդիսանում, բայց իրօք նոյնչափ ջերմ սիրով կապուած է մնում ամենաշնչին իրերի և ցանկու-թիւնների հետ և նոյնչափ գոխարութեամբ կարող է բաժանուել նոցանից, որչափ մեծատունն իւր հարստու-թիւնից։ Իսկ նոքա, որոնք թէ՛ դաւանում են և թէ՛ իրենց վարած կեանքով հաստատում, որ հլու հպատակներ են մամնայի, նրան հասնելու համար ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում և նրանով յոյս ունին ամէն ինչ գլու-նել՝ զօրութիւն, փառք, մարդու գոյութեանն արժէք տուող բոլոր քաղցրութիւնները, — այդպիսիներին թիւ չկայ արդէն, և նոցա դաւանութիւնն ու ընձած ընթաց-քը միւս չրջապատողների վերայ առանց ազդեցութեան չի մնում։ Եթէ քրիստոնեայ աշխարհում, ուր դարեր շա-

րունակ Աստուծոյ արքայութեան աւետարանն է քարոզուել և մամոնան իբրև մարդոց հոգեւոր, բարոյական, գաղափարական կեանքի ամենավտանգաւոր թշնամի ներկայացրել ու դատապարտել՝ կարելի է լինում նրան հրապարակով երկրպագութիւն տալ, հաղարաւոր եղանակներով նրա արժէքը գովաբանել և ամէն հակառակ տեսութիւններ ցնո՞ւք ու կեղծաւորութիւն անուանելով ծաղրել՝ այդ ըստ ինքեան ապացոյց է, թէ ինչպէս մեծ է նրա իշխանութիւնն ու հրապոյրը ժամանակակից մարդկութեան առաջ, ինչքան անգոր են աւետարանական սկզբունքի պաշտպաններն իրենց համոզմունքովն ու գործ դրած զէնքերով:

Անգոր են անշուշտ իրենք, և ոչ իրենց առաջնորդող գաղափարը, որովհետեւ մի ճշմարիտ և վսեմ գաղափար երբէք չի կարող տեղի տալ ստութեան և ունայնութեան դիմաց, ինչպիսի հակայական պատկերով կուզի սա ներկայանայ, եթէ նա մի հնչուն բառ չի մնում, այլ իրականանում է մարդոց խօսքի և գործքի մէջ: Իսկ թէ սուտ է որ դրամը, ստացուածքն ու արտաքին մեծութիւնը մարդուն իսկական արժանիքներ են ընծայում, — ում համար ապացոյցի կարօտ է այդ. մամոնայի ամենամոլեռանդ երկրպագուն անգամ պէտք է իւր խղճի առաջ խօստովանի, որ ինքն իրեն խաբում է, աւազի վերայ տուն չինում, և եթէ նա այնչափ կոյր է կամ յանդուգն, որ չի խօստովանի, — անողոր իրականութիւնն անում է այդ խօստովանութիւնը իւրաքանչիւր քայլափոխում՝ մէկը միւսից աւելի խրատական օրինակներով: Մենք այդ օրինակները տեսնում ենք, տեսնում ենք այն բոլոր անիրաւութիւնները, որ գործում են աշխարհում ի սէր մամոնայի կամ իբրև հետեւանք նրա տիրապետութեան. տեսնում ենք, որ մամոնայի սէրն ինչպէս ժանգ մարդոց հոգին պատելով՝ ուտում, մաշում է նոցա մէջ բոլոր առաքինական հակումները, անընդունակ դարձնում նրանց աղնիւ ձգտումների, և ահաւոր նշաններով արդարանում է Մեծ Վարդապետի դատաւճիռը, թէ հարուստը՝ իւր բոլոր ուշ ու միտքն ստացուածք ժողովն-

լու և պահելու դնող մարդը, չի կարող Աստուծոյ արքայութիւն մտնել՝ սիրել Աստուծուն և արդարութեան, ճշմարտութեան ու սրբութեան անսպառ գանձը, տեսնում ենք և պախարակում արծաթսիրութիւնը, վրդովուած ճառեր ասում նրա գերիների, նրա պատճառած չարիքների դէմ. բայց մեր վարձուքով նպաստում ենք ամէն կերպ նրա զօրանալուն և իրօք ծաղրելի դարձնում մեր ճառերը. Հարստութիւնն առ երևոյթ արհամարհում ենք, և հարուստի առաջ գլուխ ենք ծռում. դրամը ձեռքի կեղտ ենք անուանում, և ճակատի պսակ, գուրգուրանքի առարկայ դարձնում այն. ապականում է, ասում ենք, ու սարկացնում մարդուն, և երբ մէկը ճարպիկ կերպով գործ է դնում այն պատիւ և անուն վաստակելու համար, աչք են փակում նրա բոլոր պակասութիւնների հանդէպ, իբրև բարեգործ և ազնուական հռչակում նրան, և թոյլ տալիս այդպիսով պարծենալու, թէ կարող է դրամի զօրութեամբ լինել և երևալ աւելի ինչ, քան է իսկապէս:

Եւ ահա հազար ու հազար լեզուներ ուղղակի կամ քողարկեալ կերպով, լուրջ կամ հանաքով, առանց մտածելու կամ մոլար համոզմունքով կրկնում են, թէ դրամն ամենակարող է, թէ աշխարհը նրա շուրջն է պտտում, թէ նրանով ամէն նպատակի հասնել կարելի է,— և այդ դիւական ուսմունքը հալուում է աճող սերունդների ականջում, միլիոնաւոր մարդոց կեանքի վարդապետութիւնը դառնում ու իւր ոսկեհուռ ցանցի մէջ ամէն դաշափարական շարժում խեղդում: Իսկ մեզնից ոչ ոք լրջօրէն չի մտածում, թէ իւրաքանչիւր անդգոյշ խօսք կամ շարժում, որով քաջալերուում և ոյժ է ստանում այդ հրէշաւոր վարդապետութիւնը՝ մի ծանր հարուած է մարդկութեան բարոյական շինութեան գործի նկատմամբ, մի նոր արգելք դէպի Աստուծոյ արքայութիւն, դէպի կեանքի ճշմարիտ նպատակը տանող ճանապարհի վերայ:

Ա. Վ.

